
ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ՀՈՒՆԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ XIX ԴԱՐՈՒՄ

ԲՐՈՒՏՅԱՆ Մ. Ա.

Զմյուռնիան Փոքր Ասիայի արևմտյան ափերի ամենահին վաճառաշահ քաղաքներից մեկն է, որ բոլոր ժամանակներում աչքի է ընկել իր գեղեցկությամբ, վեհաշուք կառույցներով, ընդարձակ նավահանգստով: XIV դ. սկզբին քաղաքը նվաճեցին թուրքերը և իրենց նավատորմով Միջերկրական ծովում սկսեցին զբաղվել ծովահենությամբ ու թալանով: Նույն դարում Զմյուռնիայի Բաքոս լեռան վրա ձևավորվեց քրիստոնյաների թաղամասը: Թուրքերի գրավումից երկար ժամանակ անց քաղաքը շարունակեց մնալ որպես հունական կյանքի և մշակույթի կենտրոն մինչև 1922 թվականը: Դառնալով Օսմանյան կայսրության երկրորդ մեծ քաղաքը և Այդըն վիլայեթի կենտրոնը՝ այն միաժամանակ կայսրության ասիական նահանգների տնտեսական և մշակութային կյանքի հանգույցն էր, որտեղ բերվում էին Ասիայի ամենաթանկ ապրանքները: Հունական այս քաղաքում հայկական համայնքի ձևավորման վերաբերյալ ստույգ տեղեկություններ չկան, թեև հայտնի է, որ գաղթականության մեծ հոսք է եղել Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո և Շահ Աբասի արշավանքների ժամանակ: Կիլիկիայից հայերի գաղթած լինելու մասին վկայում են 1636 թ. նորոգված՝ Ս. Ստեփանոս և Բարդուղիմեոս եկեղեցու բակի տապանաքարերը: Առաջին գաղթածները առևտրականներ և արհեստավորներ են եղել¹: Հայության զգալի հոսք տեղի է ունեցել XVIII դարում և XIX դ. 1800-ական թթ. վերջերին:

Զմյուռնիային բնորոշ են եղել բնակչության ոչ մեծ թվաքանակն ու բազմազան կազմը: Հայերն այստեղ մշտապես շատ չեն եղել: XVII դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժան-Բատիստ Տավերնիեի² վկայությամբ քաղաքում կար 60 հազար թուրք, 15 հազար հույն և 8 հազար հայ, 6 կամ 7 հազար հրեա բնակչություն. «Թուրքերն ունեին 15 մզկիթ, հրեաները՝ յոթ սինագոգ, հայերը՝ մեկ եկեղեցի»³: Հայերի՝ մեկ եկեղեցի ունենալու մասին է վկայում նաև XIX դարի բրիտանացի քաղաքական գործիչ Ջոն Հոբհոուզը 1809-1810 թթ. իր կատարած ճանապարհորդության վերաբերյալ գրառումներում. «Հայերն ապրում են քաղաքից դեպի հյուսիս-արևելք գտնվող թաղամասում, ֆրանկների և հունական թաղամասերի միջև, ունեն մեծ, լավ կառուցված

¹ Դիմաքսեան Հ., Շիրք մ անունք ի Միջերկրականէ, Կ. Պոլիս, 1877, էջ 328:

² Յունահայ տարեգիրք, Աթէնք, 1928, Բ տարի, էջ 279:

³ Les six voyages de Jean Baptiste Tavernier, Paris, 1713, p. 76.

եկեղեցի»⁴: Ձմյուռնիայի բրիտանական հիվանդանոցի բժիշկ Ջորջ Ռոլլեստոնը 1856 թ. իր հուշերում նշում է քաղաքում բնակվող 10 հազար հայերի, 50 հազար հույների մասին: Հեղինակը, որի աչքից չի վրիպում հայերի և հույների ունեցած կարևոր դերը քաղաքի տնտեսական կյանքում, նշում է. «Հայերը, ինչպես նաև հույն առևտրականները, անգլիական շոգենավերով Լիվերպուլում, Ալեքսանդրիայում, Կոստանդնուպոլսում առևտուր էին անում»⁵: Հայկական թաղամասը կամ Հայնոցը, որ հիմնվել է 1500-ական թթ. վերջերին, ականատեսների վկայությամբ, եղել է քաղաքի ամենագեղեցիկ փայրերից մեկը, աչքի ընկել իր կանոնավոր, հարթ ճանապարհներով, գեղեցիկ տներով: Այն ավելի բարեկարգ է դարձել 1845 թ. տեղի ունեցած մեծ հրդեհից հետո: Հայերն այստեղ են կենտրոնացրել կարևոր բոլոր կառույցները՝ Ս. Ստեփանոս եկեղեցին, դպրոցները, հիվանդանոցը, առաջնորդարանը: Եկեղեցու գավթի հատակը 1885-ին կառուցել են Պալոգյան եղբայրները, մարմարյա հատակը՝ 1878 թ. Խաչատուր Գարագաշյանը: Եկեղեցու գերեզմանոցում XVI դարի տապանաքարեր կան, այստեղ է եղել Եգիպտոսի կուսակալի գլխավոր խորհրդական, ազգային բարերար, ծագումով զմյուռնացի Պետրոս Յուսուֆյանի մահարձանը:

XVIII դարում Ձմյուռնիայում հույն բնակչությունը ստվարացել է ի հաշիվ կղզեբնակների. եթե 1717 թ. քաղաքի 29 հազար բնակչությունից 10 հազարն էին հույն, ապա մեկ դար անց 150 հազար բնակչությունից հույները 60 հազար էին: Սկսած XVIII դարից՝ այստեղ են եկել հույներ Քիոս, Նաքսոս, Սանդորինի և այլ կղզիներից: Սկզբնական շրջանում վերաբնակեցվել են այգեպանները, ավելի ուշ՝ արհեստավորներ՝ հիմնականում կոշկակարներ, որմնադիրներ, քանդակագործներ: Որպես առաջին վերաբնակիչներ՝ քիոսցիները, կարճ ժամանակում իրենց շուրջը համախմբելով նաև տեղացի հույներին, կարողացան ստեղծել ծաղկուն հունական համայնք:

Ինչպես բյուզանդական ժամանակաշրջանում, այնպես էլ օսմանյան տիրապետության օրոք Ձմյուռնիան շարունակում էր պահպանել տարածաշրջանի առևտրում իր արտոնյալ դիրքը: Ավելին, օսմանյան խոշոր քաղաքներից Ձմյուռնիան էր վաճառքից ամենամեծ շահույթն ստանում: Գտնվելով առևտրական ճանապարհների խաչմերուկում՝ փոքրասիական տարածաշրջանում Ձմյուռնիան էր կարգավորում առևտրական երթևեկությունը: Հայ բնակչության թվի ավելացումը ուղղակի կապ ուներ առևտրի զարգացման հետ. Բրուսայի և Հալեպի մրցակցության ընթացքում քաղաքը Եվրոպայի համար դարձել էր իրանական մետաքսի շուկա: Ձմյուռնիայի

⁴ Hobhouse J. A Journey Through Albania and Other Provinces of Turkey in Europe and ..., P. 2, Philadelphia, 1817, p. 75.

⁵ Rolleston G. Report on Smyrna, London, 1856, p. 44.

նավահանգիստներն ունեին ավելի էժան ծովային ելք դեպի Անատոլիա և Էգեյան ծովի հետ ավելի ապահով կապ էին առաջարկում: Այս հանգամանքը շահավետ էր հայերի համար. հատկապես Շահ Աբասի կողմից Իրանի մետաքսը հենց Եվրոպայում վաճառելու քաղաքականությունը, ուստի պարսկահայ առևտրականները, ընդլայնելով իրենց գործունեությունը, հասել էին Ջմյուռնիա⁶: Հայ բնակչության ստվարացում է նկատվել նաև այն ժամանակ, երբ բարձրացել է հոլանդացի վաճառականների դերը: Ջմյուռնիայի հոլանդական վաճառատները մեծ շահույթ էին ստանում հայերի՝ Եվրոպայում կատարած առևտրից: Առհասարակ, թուրքական տիրապետության շրջանում, երբ եվրոպացիներն իրենց առևտրական կենտրոնները տեղափոխեցին Ջմյուռնիա, հայերը ստանձնեցին թարգմանիչների և միջնորդների գործը: Ջմյուռնիայի գլխավոր մաքսատներից էր ծովափին գտնվող «Առևտրական մաքսատունը», որտեղից էին ներմուծվում, մաքսվում Եվրոպայից բերվող ապրանքները, նաև պարսկահայերի բերած և այնտեղից Եվրոպա արտահանած կերպասները, բամբակե մանվածքը, ուղտի բուրդը, կաշվեղենն ու այլ ապրանքներ:

Հայ առևտրականները Ջմյուռնիայում, բացի մեծ հարստությունից, նաև հեղինակություն ունեին: Հայտնի է, որ Պետրոս Մեծի հրամանով գմյուռնահայ վաճառական Պետրոս Ապրոն իրավունք է ստանում միջնորդ հանդիսանալու պարսկահայերի՝ Ռուսաստան մուտք գործելուն⁷: Հոլանդացի ճանապարհորդ Լե Բրունի վկայությամբ 1678 թ. Ջմյուռնիայի մեծահարուստ հայերից մեկին՝ Անտոնիոս Միլվաս անվամբ, որին տեղացիները Միլբի խան էին անվանում, զրպարտում են տեղի թուրքերը և կանչում Կ. Պոլիս: Կայսրության մայրաքաղաքում, ըստ հեղինակի, նա կկորցնեք և՛ իր գլուխը, և՛ ունեցվածքը, այնինչ Միլվասը Պոլսում իր ունեցած հեղինակությամբ և հայ համայնքի օգնությամբ կարողանում է արդարանալ մեծ վեզիրի մոտ: Այստեղից կարելի է ենթադրել նրա՝ կարևոր անձնավորություն լինելու և Կ. Պոլսի հայ համայնքի հետ սերտ կապեր ունենալու մասին⁸:

XVIII դարում Ջմյուռնիայում է բնակվել հայազգի Սարգիսը, որը վենետիկցիների մոտ աշխատել է որպես թարգմանիչ, բնակվել է «Հայկական փողոցում», ունեցել է ճոխ ու գեղեցիկ մի տուն՝ պարտեզով ու աղբյուրներով⁹:

Հայ առևտրականների գործունեությունը կարգավորում էին առևտրական ընկերությունները, որոնցից հայտնի էր Ջմյուռնիայի առևտրական սենյակը՝ Մեսրոպ Միմոնյանի գլխավորությամբ: Քաղաքի համար կարևոր այս

⁶ Inalcik H., Quataert D. *An Economic and Social History of the Ottoman Empire*, V. 1, Cambridge, 1997, p. 245.

⁷ Քուէան Յ., Հայք ի Ջմիւռնիա եւ ի շրջակայս, Վիեննա, 1899, հատ. I, էջ 32:

⁸ Σολομωνίδης Σ. *Η Σύμρινη προ δύο αιώνων*, Μικρασιατικά χρονικά, τ. 1, Αθήνα, 1938, σ. 160, Le Brun C. *Voyage au levant...* Paris, 1714, p. 21.

⁹ Φαλμπου Φ. *Μάρκου Αντωνίου Κατσαίτη*, Αθήνα, 1972, σ. 65.

հաստատությունը գնահատում էին նաև հույն, թուրք, հրեա վաճառականները¹⁰։ Ջմյուռնիայի հայ վաճառականները իրենց վաճառատներն ունեին քաղաքից դուրս։ Դրանցից էին Պագրձյան եղբայրները, որոնց առևտրական ընկերությունը լայն գործունեություն էր ծավալում Մարոկկոյի, Եգիպտոսի, Ուրուգվայի, Բալկանյան երկրների տարբեր քաղաքների հետ՝ որպես կենտրոն հաստատվելով Մանչեստրում¹¹։ Առհասարակ Անգլիայի և Ջմյուռնիայի առևտրական գործունեությունն իրականացնում էին հունական և հայկական առևտրական ընկերությունները¹²։

Ի սկզբանե Ջմյուռնիայում խճճված տնտեսական հարաբերություններ կային կրոնական հանրությունների և եվրոպական ընկերությունների միջև։ Մաքսային գործով զբաղվում էր հրեական համայնքը, որին այդ արտոնությունը նախկինում տվել էր կայսրությունը։ Ժամանակի ընթացքում հրեաները սկսում են շահագործել իրենց վարչական փորձը, որը հանգեցնում է եվրոպացի առևտրականների դժգոհությանը։ Կարճ ժամանակ անց հրեական առևտրական ցանցը Ջմյուռնիայում և մի շարք այլ քաղաքներում սկսում է մարել, զուգահեռաբար այս ասպարեզում նրանց մրցակից և փոխարինող են դառնում հայերն ու հույները¹³։

Դեռևս XVIII դարում հայերի և հույների՝ առևտրում ունեցած հաջողությունների մասին վկայություններ է հաղորդել Մարկոս Կացայիտեսը, որը 1742 թ. եղել է Ջմյուռնիայում. «Հույները, հայերը և հրեաները շատ մեծ առևտուր էին անում Ջմյուռնիայում։ Նրանք Պարսկաստանից և Փոքր Ասիայից բերում են ամենաթանկ ապրանքները, ինչպես, օրինակ, մետաքսե կերպասներ, բամբակյա մանվածք, ուղտի բուրդ, կաշիներ, ... և նման այլ ապրանքներ, որոնք այնուհետև ֆրանկները փոխադրում են Եվրոպա՝ դրանց փոխարեն ներմուծելով բրդյա կերպասներ, գույնզգույն դիպակներ, մետաքսե գործվածքներ և այլ ապրանքներ, որոնք հեշտությամբ վաճառում են թուրքերին»¹⁴։

Առևտրում ցուցաբերած իրենց հմտությունների շնորհիվ մեծ հաջողությունների էին հասնում հույները։ Քաղաքում նշանավոր էին հույն ներմուծողները, արտահանողները, արդյունաբերողները և արհեստավորները։ 200 մեծ առևտրական խանութներից 163-ը հունական էին, 25-ը՝ եվրոպական, 5-

¹⁰ Յունահայ տարեգիրք, Աթենք, 1928, Բ տարի, էջ 286։

¹¹ Նույն տեղում։

¹² XIX դ. Ջմյուռնիայի հայ վաճառականների գործունեությանը հանգամանորեն անդրադարձել է Ա. Խառատյանը, **Խառատյան Ա.**, Ջմյուռնահայ համայնքը և թանգիմաթի բարենորոգումները (1840-1850-ական թվականներ) (Պատմա-բանասիրական հանդես, 2003, - 1, էջ 210-211)։

¹³ **Avigdor L.** Jews, Turks, Ottomans: A Shared History, Fifteenth Through the Twentieth Century, N Y, 2002, p. 34

¹⁴ Φαλμου Φ. Ο. π., σ. 74.

ը՝ հայկական, և միայն 3-ը՝ թուրքական: Արդեն XIX դարում հույները զբաղեցնում էին արդյունաբերության մոտ 80 տոկոսը¹⁵: Աճող առևտրի շնորհիվ XVIII դարի երկրորդ կեսին միայն Ֆրանսիա արտահանվող ապրանքների ծավալը ավելացել էր 4 անգամ՝ XIX նույն դարի առաջին կեսի հետ համեմատած, իսկ XIX դարում ընդհանուր արտահանումը բարձրացավ 2 անգամ՝ նախորդ դարի համեմատությամբ: Չմյուռնիայի առևտրի այդպիսի սրընթաց աճն ընդհատվեց միայն հունական հեղափոխության տարիներին: 1818 թ. հույներն արդեն Չմյուռնիայում առևտրական գրասենյակներ ունեին, որը 1842 թ. կոչվում էր «Հունական ակումբ»: 1920 թ. այնտեղ ընդգրկված են եղել 20 մասնագիտական ասոցիացիաներ¹⁶:

XVIII-XIX դարերում առևտրի ոլորտում հայտնի էր հույն Բալտաձի ընտանիքը: 1743 թ. առևտրական Մարինոս Բալտաձիսն ընտանիքի անդամներից առաջինն էր, որ Քիոսից Չմյուռնիա տեղափոխվեց: Նրան 1760 թ. հաջորդեց զարմիկը՝ Դմիտրին: Եթե ընտանիքը XVIII-XIX դարերում զբաղվում էր միայն առևտրով, ապա XIX դարի կեսերին ակտիվ գործունեություն էր ծավալում նաև բանկային համակարգում, իսկ դարավերջին՝ քաղաքական և մշակութային ոլորտներում: XVIII դարի երկրորդ կեսին Էվանգելինոս Բալտաձիսն հիմնադրեց Չմյուռնիայի ամենամեծ առևտրական տներից մեկը: XIX դարի սկզբին այս ընտանիքից Պերիկլեսը Չմյուռնիայի հայտնի վաճառականներից էր: Բալտաձիսները առևտրական գործունեություն են ծավալել Աթենքում, Ստամբուլում, զբաղեցրել կարևոր պաշտոններ. Քսենոփոնը՝ դիվանագետ Պոլսում, Դեմոսթենեսը՝ Պոլսի հնագիտական թանգարանի տնօրեն և այլն¹⁷:

XIX դարի հույն առևտրականներից էր Իոանիս Աթանոպուլոսը: Նրա նախնիները ներգաղթել էին դեռևս 1600-ական թվականներին: Աթանոպուլոսը Չմյուռնիայում սեփական առևտրական գրասենյակ ուներ, տիրապետում էր տասը օտար լեզվի: Նրա ջանքերով 1862 թ. զարկ է տրվում թղթի արտադրությանը, որի հիմնադիրը այստեղ եղել էր Հակոբ Տյուգյանը՝ դեռևս 1842 թ.:¹⁸

Հայտնի հույն առևտրական ընտանիքներից էր Երուսիս ընտանիքը: XIX դարում այս ընտանիքի անդամներ Ջոտիրոսը, Կոստանդինոս ու Էմանուելը հայտնի էին իրենց գործունեությամբ Չմյուռնիայում և այլուր: Չմյուռնիայում

¹⁵ Σολομωνίδης Σ. Η ελληνικότητα της Σμύρνης, Αθήνα, 1972, σ. 21.

¹⁶ Σμυρνή, Κέντρο Μικρασιατικών Σπουδών, Αθήνα, 2005, σ. 89.

¹⁷ Χαράλαυτ Τ. Εμπόριο και ναυτιλία τό 19 αιώνα Αθήνα, 1993, σ. 69. Կարևոր դեր է ունեցել Ֆանարիոտե ընտանիքը, որը սովել է բազմաթիվ հայտնի գիտնականներ, բժիշկներ և դիվանագետներ:

¹⁸ Σολομωνίδης Σ. Ο Κεατχανές, Μικρασιατικά χρονικά, τομος V, Αθήνα, 1963, σ. 238.

նրանց ջանքերով ստեղծված առևտրական տունն իր գրասենյակներն ուներ Տրիեստում, Պատրայում¹⁹:

1800-ական թթ. Չմյուռնիայում բացվում է Ռալլի առևտրական տունը, որը հետագայում իր գրասենյակներն է բացում Մալթայում, Լոնդոնում և այլուր: 1826 թ. ստեղծված «Ռալլի եղբայրներ» առևտրական ընկերությունն իր գործունեությունն է տարածել Միջերկրական ծովում, Պարսկաստանում, ԱՄՆ-ում:

1838 թ. օգոստոսին ստորագրվում է անգլո-թուրքական առևտրական պայմանագիրը, որը նախատեսում էր Օսմանյան կայսրության ողջ տարածքի վրա ազատ առևտրի և Միջերկրականի ջրերով ու սնծովյան նեղուցներով ապրանքի անմաքս փոխադրության իրավունք: Պայմանագիրը նպաստում է առևտրի աճին կայսրության բոլոր քաղաքներում, նաև Չմյուռնիայում. այս ժամանակաշրջանում մեծ էր քաղաքի համբավը հացահատիկի, բամբակի, ձիթապտղի արտադրության ոլորտում: Բամբակի պահանջարկը է՛լ ավելի է մեծանում 1861-1864 թթ. ԱՄՆ-ի քաղաքացիական պատերազմի ընթացքում: Օրավուր աճող առևտուրը, որ մեծ մասամբ հույների ձեռքին էր, 1873 թ. կազմում էր ողջ կայսրության արտահանման 43, ներմուծման 20 տոկոսը: Չմյուռնիայի մարզերից բերվում էին բամբակ, ձեթ, բուրդ, գորգեր, ներկեր, կաշի, դեղագործական ապրանքներ: Այս ամենը նպաստում է հունական առևտրի զարգացմանը:

Չմյուռնիայի և նրա շրջակայքի տնտեսական կյանքում աստիճանաբար ներգրավված հույների և հայերի կրթվածության և ձեռներեցության մասին է վկայում Ջ. Ռոլեստոնը: Հեղինակն այստեղի հայերին շատ հատկանիշներով նմանեցնում է հրեաներին. «Դժվար էր տարբերել հայերին և հրեաներին: Այստեղ կային քիչ թվով աղքատ հայեր: Հայերը հիմնականում կրթված էին, նրանց տներն աչքի էին ընկնում մեծությամբ»²⁰: Հույները, որ, ըստ հեղինակի, կազմում էին բնակչության մեկ երրորդը, տիրապետում էին գրեթե բոլոր մասնագիտություններին: «Նրանց մեջ կային և՛ առևտրականներ, և՛ բժիշկներ ու փաստաաններ, մեծահարուստ վաճառականներ, որոնք այդ ամենին էին հասել սեփական ուժերով»²¹:

XIX դարի վերջի մաքսային մատյանների տվյալներով կայսրության ներմուծման և արտահանման մի ստվար մասը հայերն էին վճարում, չնայած թվաքանակով հույներից և հրեաներից քիչ էին: Այդ մասին վկայում են կրկին օտար ճանապարհորդները, ըստ որոնց, 1828թ. հույների ապստամբությունից հետո քաղաքում առևտրի մեջ առավել մեծ գերակշռություն վերցրեց հայ

¹⁹ Βασίλης Λάζαρης. Η πολιτισμική φυσιογνωμία της Πάτρας, Πάτρα, 1997, σ. 83.

²⁰ Rolleston G. Report on Smyrna, p. 44.

²¹ Նույն տեղում, էջ 31:

առևտրական դասը, որոնք, ժամանակակիցների վկայությամբ, առավել խելացի էին և, ըստ նրանց, առավել ազնիվ²²:

Զմյուռնիայում հայ առևտրականն առավել հաջողություններ ուներ, քան արհեստավորը. Վերջինս ստիպված էր դիմադրել այս բնագավառում իրենից հմուտ հարևանների մրցակցությանը, քանի որ «արհեստներէն ոմանք կատարելագործուելու կարօտ են և ոմանք ապագայ չունին: Հայ ոսկերչին, դերձակին ու դարբինին դէմ ծանր է արդարեւ օտար շահամրցութիւնն: Եւ մինչդէռ մեր կօշկակարը, վերմակագործը, սափրիչը դժուարութեամբ կյառաջանային նշանաւոր, յոյն արհեստաւորները միջոցը գտած են հարստանալու եւ Եւրոպայի ապրանց դէմ մրցելու»²³: Սա է պատճառը, որ Զմյուռնիայում հայ արհեստավորներն ու մտավորականները հանդես են գալիս համեմատաբար փոքր քանակով: Այս ուղղությամբ Հ. Քոսյանը նկատում է. «Արուեստներն այնչափ ընդհանուր չեն տարածուած Հայոց մէջ. կը գտնուին աննշան թուով ժամագործ, ոսկերիչ, դարբին, վերմակագործ, դերձակ, կօշկակար, ատաղձագործ և այլն, որոնցմէ ոմանք կարի նուագ են»²⁴: Քչաթիվ են եղել նաև բժիշկները, փաստաբաններն ու դեղագործները, որոնք, սակայն, մեծ անուն ու համբավ են ունեցել ողջ կայսրութիւնում:

Զմյուռնահայ առևտրականների աճող հաջողությունների մասին են վկայում քաղաքի պատմությանը քաջատեղյակ եվրոպացի Բոնավենթուր Սլաարսի տվյալները, ըստ որոնց, XIX դարի վերջին քաղաքի մեծածախ առևտրով զբաղվում էին հիմնականում հայերը, որոնց ձեռքում էին կենտրոնացած հայ վարպետների, հատկապես դարբինների, ներկարարների և այլ արհեստավորների արտադրած՝ տոնավաճառներին ներկայացած առավել կարևոր ապրանքները²⁵: «Հայերն անհամեմատ հարուստ էին, քան լատինները և համեմատաբար հարուստ, քան հույները: Ունևոր հայերը աչքի են ընկել իրենց ժամանակակից հանդերձանքով, կանայք՝ ֆրանսիական ոճով կարված հագուստներով, տղամարդիկ՝ եվրոպական պիջակներով, կարմիր գլխարկներով»²⁶: Նա վկայություններ ունի զմյուռնահայ մեծահարուստ առևտրական Պետրոս Յուսուֆյանի կողմից 1835 թ. Մանչեստրում դպրոց բացելու վերաբերյալ, որտեղ ուսումնառության պարտադիր լեզուն հայերենն է եղել: Այստեղ սովորել են նաև հունարեն, ֆրանսերեն, անգլերեն: Մինչ այդ՝ XIX դարի սկզբին, նա ակտիվ է

²² Charles MacFarlane, *Constantinople in 1828: A Residence of Sixteen Months in the Turkish capital and provinces*, London, 1829, p. 64.

²³ Արեւելեան Մամուլ, I. 1891, էջ 40:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Slaars B. *Étude sur Smyrne*, Smyrne, 1868, p. 145. Հեղինակը ծնունդով Զմյուռնիայից էր և այնտեղ է բնակվել մինչև 1922 թ.:

²⁶ Նույն տեղում, էջ 146:

գործել Տրիեստում՝ հանդիսանալով տեղի հայ առևտրականների շահերի պաշտպան²⁷:

Հայ և հույն համայնքների տնտեսական մրցակցությունը, որ ցայտուն դրսևորվում է կայսրության խոշոր քաղաքներում, վառ արտահայտված էր նաև Ձմյուռնիայում: Այստեղ ևս հայերն ու հույները որպես միլիթների համակարգի բաղկացուցիչ տարրեր բնակվում էին կրոնական ու որոշ տնտեսական սահմանափակումներով: Օսմանյան առևտրական ընկերությունները երբեմն շահագործում էին այս կառույցները, փորձում հարմարեցնել իրենց նպատակներին: Կամայականությունները մեծ չափերի էին հասնում մայրաքաղաքից հեռու Ձմյուռնիայում, որտեղ արձակած օրենքները կա՛մ չէին գործում, կա՛մ գործում էին մասնակի: Բազում օրինակներ կան, երբ Ձմյուռնիայի հայերը, հույներն ու հրեաները դուրս են եկել առևտրական ընկերությունների դեմ²⁸:

Ձմյուռնիայում ակնհայտ էր հույն և հայ բնակչության՝ մշտական «գլավուրի» կարգավիճակը. անհավատները ազատ մուտք չունեին քաղաքի թուրքական թաղամաս²⁹: Ձմյուռնիայի յուրաքանչյուր բնակիչ տարբերվում էր իր հանդերձանքով: Քրիստոնյաներին արգելված էր կանաչ հագուստ, սպիտակ շապիկ կրել, և եթե ենիչերիները հանդիպեին այդպես հանդերձավորված քրիստոնյայի, իրավունք ունեին ծեծի ենթարկելու նրան³⁰: Թեև 1856 թ. փետրվարի 18-ի հրամանագիրը դատապարտում էր այն թուրքերին, որոնք չէին հարգում բոլոր հպատակների «հավասար իրավունքները», սակայն այս ամենը ձևական էր: Չորջ Ռոլլեստոնի վկայությամբ՝ մրցակցությունը, որ առկա էր հայերի և հույների միջև, փոխադարձ ակնարկները շարունակվում էին մինչև թուրք վերնախավի կիրառած հալածանքները նրանցից մեկի նկատմամբ: «Հայերն ու հույները մի մեծ ընդհանրություն ունեին՝ տեղացի թուրքերի նկատմամբ համընդհանուր ատելությունը, քանի որ վերջիններս սանձարձակ էին գործում: Թե՛ ծերերի, թե՛ երիտասարդների դեմքերը ցավ ու ատելություն էին արտահայտում»³¹: Հայերի և հույների իրավագուրկ վիճակի մասին հաղորդում է նաև XIX դարի ճանապարհորդներից մեկը. «Ֆրանկների թաղամասը բնակեցված էր եվրոպական վաճառականներով՝ բրիտանացի, ֆրանսիացի, իտալացի և այլն, որոնք ապրում էին իրենց հյուպատոսությունների պաշտպանության ներքո և չէին ենթարկվում օսմանյան արդարադատությանը: Տեղի հայերն ու հույները տարբերվում էին իրենց՝ ռայաներին բնորոշ հասարակական դիրքով: Ռա-

²⁷ Նույն տեղում:

²⁸ Eldem E., Goffman D., Masters B. *The Ottoman City Between East and West: Aleppo, Izmir, and Istanbul*, Cambridge 1999, p. 96.

²⁹ Avigdor L., նշվ աշխ., էջ 34:

³⁰ Σολομωνίδης Σ. *Σμυρναϊκά Σημείωματα*, Αθήνα, 1966, σ. 55.

³¹ Rolleston G., նշվ աշխ., էջ 34:

յաները սուլթանի ոչ մահմեդական ստրուկներն էին»³²։ Ձևական ընկերություն և համագործակցություն կար հույն և թուրք բնակչության միջև, սակայն ընդունված էր փորձից բխող հետևյալ արտահայտությունը. «Թուրքերի հետ ընկերացիր, բայց մի բարեկամացիր»³³։

XIX դարի բրիտանացի քաղաքագետ Ջ. Հորհաուզը ևս իր հուշերում գրում է, որ կայսրության բոլոր քաղաքների նման այստեղ ևս թուրքերը ելք էին տալիս իրենց կամայականություններին։ Ըստ ականատեսի՝ Չմյուռնիայում մի վեներտիկցի սպանում է ենիչերիներից մեկին։ Նրան գտնելու համար թուրքերն այրում են ֆրանկների թաղամասը, սակայն չեն բավարարվում։ Դրանից հետո նրանք իրենց վրեժը լուծում են հայերից ու հույներից՝ փողոցում սպանելով 300 հոգու³⁴։

Հաճախ են քրիստոնյա այս համայնքները հանդես եկել փոխադարձ օգնությամբ։ XIX դարում Չմյուռնիայում հայտնի էր հույն Քյուբեջի օղլուն՝ որպես հայ և հույն համայնքների բարերար։ Նա հունաց ազգային վարժարաններին և հիվանդանոցներին կտակել էր 60 հազար ոսկի։ Իր կտակում 60 ոսկու նվիրատվություն է արել նաև հայկական Ազգային հիվանդանոցին³⁵։ XIX դարի 40-ական թթ. Չմյուռնիայում հիմնվում է «Սյունյաց» ընկերությունը, որի նպատակն էր նպաստել Չմյուռնիայի և շրջակայքի հայության մեջ կրթության տարածմանը։ Դրա հիմնադրմանը նպաստել են տրիեստաբնակ հայ վաճառականները։ Նրանք ընկերության մեջ էին ներգրավել իրենց հույն գործընկեր Սարիտակին, որը զգալի նյութական աջակցություն էր ցուցաբերել «Սյունյացին»³⁶։ Երկու համայնքների միջև առաջացած տնտեսական մրցակցությունն ու այդ հողի վրա ստեղծված որևէ տարաձայնություն մի կողմ էին դրվում, երբ խոսքը վերաբերում էր համայնքներից որևէ մեկի և օսմանյան վարչակարգի հարաբերություններին։ Իրենց համար վտանգավոր ժամանակահատվածում՝ 1894-96 թթ. կոտորածների ժամանակ, հայերը Չմյուռնիայում ստացել են իրենց հույն հարևանների աջակցությունը³⁷։

Քաղաքում քրիստոնյա երկու համայնքների սերտ շփման արդյունք է տեղի հայության՝ հունարենին լավ տիրապետելը։ XIX դ. սկզբից, երբ բարձրացավ հունական ազգային ինքնագիտակցությունը, տարածվեց հունականությունը, Չմյուռնիայում բարձրացավ հունարենի դերը. «Մենք հունարեն ենք խոսում Չմյուռնիայում։ Մենք չգիտենք թուրքերեն, միայն մեկ-երկու արտահայտու-

³² Schiffer R. *Oriental Panorama: British Travellers in 19th Century Turkey*, Amsterdam, 1999, p. 111.

³³ Κλεανθί Φ. *Η ελληνική Σμυρνή, Αθήνα, 1995, σ. 35.*

³⁴ Hobhouse J. C. *A journey through Albania...*, during the years 1809 and 1810, London, 1813, p. 72.

³⁵ Արեւելեան Մամուլ, 1898, XV, էջ 594։

³⁶ Խառատյան Ա., նշվ աշխ., էջ 209։

³⁷ Georgelin H. *Armenian inter-community Relations in Late Ottoman Smyrna, Armenian Smyrna*, edited by R. Hovhannisyan, California, 2012, p. 183.

թյուն: Անշուշտ, հայերն ու հրեաները ևս գործածում են հունա-բենը», - վկայել է Ջոյունիայի բնակիչ Յ. Կավգալակիսը³⁸: Հունարենը քաղաքի առևտրի լեզուն էր: Սա չի վրիպում նաև Հ. Քոսյանի աչքից. «Կը տեսնուին փողոցներու մէջ, ձեռքի վրայ առուտուր ընողներ, մրգավաճառներ, փերեզակներ եւն հայեր, հրեաներ, տաճիկներ, որոնք յունարէն կը կանչեն՝ զնողներ գտնելու համար»³⁹: XX դարի սկզբին հունարենը, դադարելով միայն առևտրի լեզու լինել, գերիշխող դերում է հայտնվում այն աստիճան, որ անհանգստացնում է զմիտունահայ մտավորականությանը. «Կարծողներ կան, թէ անօգուտ է մաքառիլ Իզմիրի հայութիւնը հայ պահելու համար, թէ ճակատագրականորեն անխուսափելի է, որ Հայը յունանայ Յունիական այս ավերումն վրայ, ուր յոյն տարրը այնքան ջախջախիչ մեծամասնութիւն մը կը գերակշռէ բոլոր միւս ազգային տարրերը...»⁴⁰:

Չնայած իշխանությունների կամայականությանն ու ենիչերիների անիրավություններին՝ ներքին կյանքը ծաղկում էր ապրում: Քաղաքի տնտեսական կյանքը կարգավորում էին չարշները՝ բաց շուկաները, բեդեսթենները՝ փակ շուկաները, և հանենները՝ իջևանատները: Դրանք օտարերկրացի ճանապարհորդների նախընտրելի վայրերն էին, քանի որ աչքի էին ընկնում իրենց ճարտարապետական հորինվածքով, գեղեցիկ շինություններով: Բեդեսթենները սկիզբ էին առնում քաղաքի հյուսիսային մասերից, հասնում մինչև ծովափ: Դրանք Ջոյունիայի խոշոր շուկաներն էին: Այստեղ էր կատարվում նպարեղենի, պանրեղենի, ապխտած ձկնեղենի մեծածախ առևտուրը: Շուկաները գործել են մինչև 1922 թ., ունեցել են իրենց մասնագիտացված բաժինները, որոնք կոչվել են վաճառվող ապրանքների անուններով: Քաղաքի տնտեսական կյանքի կենտրոններից էր հին շուկան՝ Բեդեսթենը, որ բաղկացած էր խառը փողոցներից: Այն քաղաքի հիմնական ու հին կառույցներից մեկն էր՝ տեղադրված քաղաքի հյուսիսային կողմում գտնվող հնագույն թատրոնի մարմարե ավերակների վայրում:

XVIII դարում Ջոյունիա այցելած հույն ճանապարհորդ, Կորֆուի բնակիչ Մարկոս Կացայիտեսը իր հուշերում գրում է. «Հասարակական բոլոր շենքերը քարաշեն են, մեծ հոգատարությամբ ու փառահեղ կառուցված՝ ինչպես տաճարները: Դրանցից են Չարշըն կամ Բեզեստենը, արձճե ծածկով, խաները, որոնցից ամենամեծն են Վեզիր խանը և Հայոց խանը, բոլորն էլ արձճով ծածկված»⁴¹: Ամուր այս շինությունը պաշտպանում էր բնակչությանը հրդեհներից: Վեզիր խանը հասարակ շինությունն չէր, աչքի էր ընկնում իր քարաշեն կառույցներով, հսկայական կամարներով: Շուկան աչքի էր ընկնում

³⁸ Նույն տեղում, էջ 181:

³⁹ Բուեան Յ., նշվ. աշխ., հատ. Ա., էջ 20:

⁴⁰ Դաշինք, 30.V.1911:

⁴¹ Φαλπου Φ. Ο. π., σ. 64.

բազմալեզու, բազմամարդ հանրությամբ: Շուկաները թեև գտնվում էին մեկ ընդհանուր ծածկի ներքո, սակայն յուրաքանչյուր ապրանք վաճառվում էր իրեն հատկացված մասում: Հայերը քաղաքում զբաղվում էին սուրճի վաճառքով: Քաղաքի մեծ սրճադահլիճներին մեկը պատկանել է հայազգի Ղազարոսին. «Նրա խանութի ներսում մի մեծ հավանգ կար, որով սուրճ էր մանրացնում և թաղամասը լցնում թարմ սուրճի բուրմունքով»⁴²:

Շուկայում հայերի, հույների, թուրքերի համար առանձին տեղեր էին հատկացված, թեև նրանց միջև հստակ սահմաններ չկային: Հայերը վաճառում էին մետաքս, մորթեղեն, նաև ոսկեղեն, հրեաները՝ մետաքսե և բամբակե գործվածքներ, հույները՝ ձուկ, գինի, բրդե մանվածքներ: Թուրքերը վաճառում էին չամիչ, չորացրած թուզ, հացահատիկ: Առանձնացված էր մի տեղ բաց շուկայի համար, որտեղ գյուղացիները բերում էին տարբեր տեսակի ապրանքներ երկրի տարբեր մասերից: «Քաղաքի այս հատվածը լի էր բնակիչների ձայներով, որոնք հայերեն, հունարեն, թուրքերեն գոռում էին, սակարկում: Շուկան հագեցած էր բազմալեզու ձայներով, դուրեկան հոտերով»⁴³: Շուկայում առանձնացված տեղեր կային ըստ վաճառվող ապրանքների, օրինակ՝ մրգեղենի շուկա, թզի և չոր մրգերի շուկա, կոշկակարների մաս, ձկնեղենի շուկա և այլն⁴⁴:

Իջևանատները, ինչպես ընդունված է եղել խոշոր տարանցիկ կայաններում, Զմյուռնիայում ևս ընդարձակ կառույցներ էին, ունեին պահեստներ և գրասենյակներ: Հույներին էին պատկանում Կրետական խանր, Քիսոյան խանր և այլք: Հայկական թաղամասում էր գտնվում Հայոց խանր:

Զմյուռնիան թուրքերն անվանում են «Գյավուր Իզմիր»: Թուրքական նվաճումներից հետո այս քաղաքը ոչ միայն գոյատևել է, այլև կարևոր դեր ունենալով, հիացրել եվրոպացի այցելուներին: Այստեղ ապրող ժողովուրդների սովորությունների, լեզվի, մշակույթների միախառնման հետևանքով ստացվել է յուրահատուկ մի համադրություն, որը, սակայն, իր ավարտն է ունեցել 1922 թվականին:

⁴² Καρτσωνάκιο Ν. Θημάμαι τη Σμύρνη, Αθήνα, 1972, σ. 8.

⁴³ Eldem E., Goffman D., Masters B., նշվ աշխ., էջ 103:

⁴⁴ Հայերը շուկա ունեցել են նաև հենց հայկական թաղամասում՝ ընդարձակ տարածությամբ, բազում բաժիններով: Φαλμπός Φ. Τσαρτσιά και παζάρια στην Σμύρνη, Μικρασιατικά χρονικά, τόμος Ι, Αθήνα, 1938, σ. 339.

**АРМЯНСКАЯ И ГРЕЧЕСКАЯ ОБЩИНЫ
СМИРНЫ В XIX ВЕКЕ****БРУТЯН М. А.**

Резюме

Смирна является одним из древнейших торговых городов на западном побережье Малой Азии. О формировании армянской общины в этом греческом городе точных сведений нет, хотя известно, что основной миграционный поток наблюдался после падения Киликийского армянского царства и во время походов Шаха Аббаса. Характерным для Смирны были малочисленность населения и его разнородный состав. Армян здесь было мало. Армянский квартал был основан в конце 1500-х гг. Увеличение армянского населения в 17 в. было напрямую связано с развитием торговли. Греческое население Смирны росло за счет островитян. Благодаря своим коммерческим навыкам они достигали успехов в торговле. Из 200 крупных коммерческих магазинов 163 были греческими, 25–европейскими, 5–армянскими и только 3–турецкими. Путешественники 19 в. отмечали роль греческой и армянской общин в развитии города. Но несмотря на это греки и армяне имели статус *гяура*.

**ARMENIAN AND GREEK COMMUNITIES IN
SMYRNA IN XIX CENTURY****M. BRUTYAN**

Abstract

Smyrna is one of the oldest commercial cities in the western coast of Asia Minor. There is not any certain information about when and how the Armenian community was established here, although it is known that a big flow of Armenian refugees from Kilikia started after the invasions of Shah Abbas. Smyrna had a small and diverse population. Not always there lived a lot of Armenians. The Armenian district called “tagh hajots” was established at the end of 1500s. In the 17th century the increase in the number of Armenian population was directly connected to the development of trade. In the 18th century the number of Greek population increased due to the islanders.

They had a lot of achievements thanks to the great skills in trade. Soon there appeared those who worked as importers, exporters, manufacturers and artisans. 163 of 200 large commercial stores belonged to the Greeks, 25 were European, 5 were Armenian and only 3 were Turkish. The travelers of the 19th century highly appreciated the role of Greek and Armenian communities in the development of the city. Nevertheless it was inevitable that both Greeks and Armenians were treated as “*gyavurs*”.